ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 սեպտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

122
(2788)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՀԻՆ» ԴՈԼԱՐՆԵՐԸ ԲԱՆԿԵՐԸ ՉԵՆ ՎԵՐՑՆՈՒՄ. ՔԱՌՍ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը պարբերաբար բողոքներ է ստանում քաղաքացիներից, որ Հայաստանի Հանրապետությունում գործող մի շարք բանկեր հրաժարվում են կատարել գործարքներ հին՝2006 թվականի արտադրության դոլարներով՝քաղաքացիներին որեւէ բացատրություն չտալով: Նշենք, որ 2006 թվականի արտադրության այդ «հին դոլարները» հին չեն համարվում նույնիսկ ԱՄՆ-ում, պարզապես 2010 թվականին ԱՄՆ-ն հայտարարեց, որ թողարկելու է նոր դիզայնով թղթադրամներ՝նոր թանաքագծով, որը կփոխեր գույնը պղնձագույնից դեպի կանաչ, սակայն նախորդների՝արտադրությունից դուրս գալու մասին որեւէ խոսակցություն չի եղել:

«Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցում ուղարկեց Հայաստանի կենտրոնական բանկ՝հասկանալու՝արդյոք Կենտրոնական բանկը տեղյակ է բանկերում թույլ տրվող ապօրինություններից: Ի պատասխան՝ ԿԲ-ից մեզ տեղեկացրին, որ ՀՀ կենտրոնական բանկը մշտադիտարկում է ֆինանսական շուկան եւ տեղյակ է այդ երեւույթի մասին: Հարցին, թե ինչու նախօրոք այս մասին չի զգուշացվել քաղաքացիներին, Կենտրոնական բանկից տեղեկացրին, որ ֆինանսական կառույցներն իրենց հաճախորդներին պարտավոր են տեղեկացնել մատուցվող ծառայությունների պայմանների փոփոխությունների վերաբերյալ: Դա չանելու դեպքում ֆինանսական ծառայությունների սպառողները կարող են իրականացնել իրենց շահերի պաշտպանության քայլեր, որոնց մասին տեղեկությունները հասանելի են ԿԲ կայքում՝հետեւյալ հղումով՝https://www.cba.am/am/SitePages/fcpforconsumer.aspx: Այս ամենից զատ արդյոք Կենտրոնական բանկը կարգավորումներ մտցնելու ուղղությամբ քայլեր անո՞ւմ է, կամ գուցե այդպիսիք այժմ արդեն կա՞ն: «Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում արտարժույթի շրջանառության ապահովման պարտավորություն չունի՝ի տարբերություն ՀՀ ազգային արժույթի՝դրամի շրջանառության ապահովման: Հայաստանի Հանրապետությունում արտարժույթի փոխանակման շուկան խիստ մրցակցային է, եւ ֆինանսական կառույցների կողմից մատուցվող ծառայությունների սակագները որոշվում են շուկայական մեխանիզմով (յուրաքանչյուր բանկ կամ փոխանակման կետ ինքն է որոշում, թե որ արտարժույթով ինչ գործառնություններ իրականացնի եւ ինչ սակագնով): Ֆինանսական կառույցների ծառայությունների սակագներն ուղղակիորեն չեն կարգավորվում կամ հրահանգավորվում Կենտրոնական բանկի կողմից»,- հայտնեցին Կենտրոնական բանկից: Այսինքն՝ երբ ինչում են որեւէ բանկի կամ ֆինանսական կազմակերպության գովազդում խոսքեր, թե կառույցը վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից, խաբեություն է: ԿԲ-ն միայն լիցենզիայի տրամադրման ժամանակ է կանոններ նախանշում, հետո ինչ ցանկանում, անում են բանկերը: Փաստացի ԱՄՆ-ում, այսպես ասած, հին դոլարները համարվում է արժույթ, իսկ Հայաստանում՝ոչ: Ու ով է որոշել՝պարզ չէ. պետությունը կազմակերպված քաոս է ստեղծել:



Կենտրոն համայնքի ղեկավար Սամվել Ղուկասյանը, ավագանու ընտրություններին ընդառաջ, անթաքույց «կաշառք» է առաջարկում երեւանցիներին: Նախ՝ընգծենք, որ նա ընդգրկված է ՔՊ-ի ավագանու ցուցակում, եւ արդեն մի քանի օր է, ինչ, քարոզարշավի մեկնարկին զուգահեռ, Կենտրոն վարչական շրջանի էջով գովազդում է, թե ճանապարհների եւ բակերի նորոգումներ են արվել, խաղահրապարակներ կառուցվել եւ այս բնույթի տարատեսակ «գայթակղիչ» խոստումներ ու գովազդներ: Նկատենք, որ մինչ քարոզարշավը թաղապետ Ղուկասյանը միայն աչքի է ընկել իր անգործությամբ, բայց քարոզարշավի օրերին ակտիվացել է, հիշել է իր պարտականությունների ու երեւանցիների խնդիրների մասին: Կենտրոն վարչական շրջանի էջն էլ ակտիվ լուսաբանում ու մեծ շուքով ներկայացնում է կոնկրետ աշխատանքները: Օրինակ՝երեկ շատ «ճոխ» ներկայացրել են, որ Երեւանի կենտրոնում գտնվող շենքերից մեկի բակն են բարեկարգել, խաղահրապարակ կառուցել կամ Հյուսիսային պողոտայում նոր աղբամաններ տեղադրել: ԿԸՀ-ը ից «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց՝արդյոք չեն արձանագրել Կենտրոնի թաղապետի կողմից թույլ տրված ընտրախախտումները եւ ընտրակաշառքի ակնհայտ դեպքերը: «Հրապարակած գրառումից ակնհայտ է, որ Կենտրոն վարչական շրջանը տեղեկություններ է հաղորդում իրենց արած կամ անելիք աշխատանքների մասին. այստեղ չի կարող խախտում լինել, քանի որ, որպես հանրային հաշվետվություն, վարչական շրջանը ներկայացնում է իր կողմից արված աշխատանքները: Եթե լիներ հրապարակում, որտեղ անդրադարձ լիներ նրան, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը ավագանու անդամի թեկնածու է, ու կոչ արվեր ընտրել այդ թեկնածուին կամ մասնակցել ընտրություններին, այսինքն՝ընտրությունների կոնտեքստով գրառում արվեր, այդ դեպքում նոր կդիտարկվեր խախտում»,-պարզաբանեցին ԿԸՀ-ից: Իհարկե լավ է, որ թաղապետ Ղուկասյանը հիշել է իր պարտականությունների մասին ու աշխատանքով է զբաղվում, բայց լավ կլիներ, որ մշտապես հիշեր իր անելիքների մասին եւ ոչ թե միայն քարոզարշավի ժամանակ: Իսկ ԿԸՀ-ն էլ, քանի որ ՔՊ-ական Վահագն Հովակիմյանն է ղեկավարում, հովանավորում է բոլոր տեսակի ընտրախախտումներն ու կաշառքի դեպքերը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն իր քարոզարշավը կեզրափակի մեծ հանրահավաքով: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանականները պատրաստվում են քարոզարշավի վերջին օրը՝ սեպտեմբերի 15-ին, մեծ հանրահավաք անել Հանրապետության հրապարակում: ՔՊ-ականները արդեն իսկ սկսել են նախապատրաստական աշխատանքները. բոլոր պատգամավորներին հրահանգվել է ոչ միայն պարտադիր ներկա գտնվել հանրահավաքին, այլ նաեւ իրենց հետ մարդիկ բերեն, որպեսզի հանրահավաքը մարդաշատ անցնի: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ն հանրահավաքին հանելու է իր ծանր հրետանուն անգամ: Նրանք, ովքեր քարոզարշավին առհասարակ չեն մասնակցել, այդ օրը հանրահավաքին կմասնակցեն: Մեր աղբյուրները փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանն էլ է մասնակցելու քարոզարշավին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Երեւանի նախկին քաղաքապետ, դերասան Հայկ Մարությանը թեեւ հայտ է ներկայացրել ավագանու առաջիկա ընտրություններին մասնակցելու համար, բայց նա անգամ նախընտրական ծրագիր չունի: Մարությանը իր սոցիալական էջերում պարբերաբար 2018թ.-ի ավագանու ընտրությունների իր նախընտական հոլովակներով է կիսվում, թե որքան ավտոբուսներ է քաղաքապետարանն այն ժամանակ ձեռք բերել, կամ քանի ապօրինի շինություն է քանդել, այլ կերպ ասած, միայն նախընտրական հին ծրագրով է «հպարտանում», բայց «սեւեր-սպիտակներ» տխրահռչակ թեզի հեղինակ նախկին քաղաքապետն առաջիկա ընտրություններին մասնակցելու համար նոր ծրագիր չի ներկայացրել երեւանցիներին: Մենք դեռ քարոզարշավի սկզբից արձանագրել էինք, որ նա բավականին փակ է, քարոզարշավի դուրս չէր գալիս, չէր շփվում երեւանցիների հետ, իսկ լրատվամիջոցներից, առհասարակ, խուսափում էր. միայն քարոզարշավի երրորդ օրը նա դժգոհություններից հետո որոշեց «արթնանալ» ու քարոզարշավ անել: Նախկին քաղաքապետը, սակայն, նախընտրական ծրագիր մինչ օրս չունի. հավանաբար, նա կամ ժամանակ չի ունեցել նոր ծրագիր կազմելու, կամ էլ պարզապես այնքան անլուրջ է մոտեցել ընտրական պայքարին, որ հարկ չի համարել անգամ նախընտրական ծրագիր ներկայացնել:

ԶՐՈՒՅՑ

ՌԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետությունում ստեղծված ծանր հումանիտար իրավիճակի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերը զրուցել է ՌԴ Պետդումայի պատգամավոր, Հայ-ռուսական «Լազարյան ակումբ»-ի համակարգող Կոնստանտին Զատուլինի հետ: Պատգամավոր Զատուլինի խոսքով՝ Ֆրանսիայի եւ Հայաստանի օգնությունն Արցախի համար, Ադրբեջանի կարծիքով, այնքան էլ կարեւոր չէ:

Նա ընդգծեց՝ այլ հարց կլիներ, եթե այդ օգնությունն ուղարկեր Մեծ Բրիտանիան. այդ ժամանակ Ադրբեջանը կմտածեր բեռները Լաչինի միջանցքով Արցախ հասցնելու մասին:

-Պարոն Զատուլին, ինչպես գիտեք, Ֆրանսիան Փարիզի քաղաքապետի ուղեկցությամբ օգնություն է ուղարկել Արցախի ժողովրդին, բայց ադրբեջանցիները, ինչպես Հայաստանի դեպքում, Ֆրանսիայից ուղարկված բեռները եւս չթողեցին մտցնել Արցախ: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Ադրբեջանն այդպես վարվում:

-Ես կարծում եմ, որ Լաչինի միջանցքի արգելափակումը անկարգություն է: Ես բազմիցս եմ խոսել այդ մասին, որ Ադրբեջանը զբաղեցնում է թելադրողի կարգավիճակ Արցախում գտնվող հայերի նկատմամբ: Դա փաստացի այդպես է, եւ Ադրբեջանի եւ Ֆրանսիայի փոխհարաբերություններն իրականացվել են ամենաբարձր նախագահական մակարդակով: Ես կարծում եմ՝ Ադրբեջանի կառավարության քայլերը եւս մեկ անգամ պատասխան են, որ իրենք ինչ ուզում, այն էլ անում են Լաչինի միջանցքում:

-Ի՞նչ եք կարծում, վերջիվերջո Ադրբեջանը կթողնի՞, որպեսզի բեռները մտնեն Արցախ:

-Ես ոչինչ չեմ կարող ասել: Այս առումով ես մտածելու ոչինչ չունեմ: Դա կախված է նրանից, թե Ադրբեջանը կցանկանա արդյոք, որպեսզի բեռները մտնեն: Կախված է նաեւ, թե ինչ հայտարարությամբ հանդես կգա Ֆրանսիան այսքանից հետո: Ադրբեջանը Ֆրանսիայի հարցում չի կողմնորոշվում: Եթե ձեր կողմից հանդես գար Մեծ Բրիտանիան, այդ ժամանակ Ադրբեջանը կմտածեր, բայց մի՛ սպասեք, որ Մեծ Բրիտանիան ձեզ կաջակցի:

-Դուք տեղյակ եք, որ ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը հրաժարական է ներկայացրել. ի՞նչ եք կարծում, ի՞նչ հետեւանքներ կունենա այն Արցախի համար:

-Այո, ես գիտեմ, բայց այդ քայլը տարբեր կերպ կարելի է բացատրել: Համապատասխան կերպ բացատրել է նաեւ Արայիկ Հարությունյանը: Դա եւս մեկ անգամ փաստում է որպես ղեկավար նրա թուլության մասին: Նա, իմ կարծիքով, բավական շատ սխալներ է թույլ տվել իր դիրքում: Նա արհամարհում էր Հայաստանի իշխանություններին՝ ցույց տալով իր անողնաշարությունը, ինչն էլ ապացուցվեց 2020 թվականի պատերազմում: Բայց ինչքան էլ լավը կամ վատն էր, նա պարտավոր էր մնալ իր դիրքում: Հիմա՝ նրա հրաժարականից հետո, այս բլոկադայի իրավիճակում դժվար թե հաջողվի ընտրություններ անցկացնել Արցախում, ինչպես եղել է երկար տարիներ: Նա պարտավոր էր այդ մասին մտածել:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՀՐԱՏԱՊ

ՀՐԱԺԱՐՎԵՑԻՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ ԱՆԵԼ

Երեկ՝ վաղ առավոտից, լարված իրավիճակ էր հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածում:

Իրավիճակին արձագանքեցին նաեւ Երեւանի ավագանու ընտրություններին մասնակից քաղաքական ուժերը, որոնցից մի քանիսը երեկ հայտարարել են քարոզարշավի ժամանակավոր դադարի մասին:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացրել է, թե որ քաղաքական ուժերն են հրաժարվել իրականացնել նախընտրական քարոզարշավ:

«Մայր Հայաստան» դաշինքի քաղաքապետի թեկնածու Անդրանիկ Թեւանյանը գրեց. «Ադրբեջանն այսօր հարձակվել է: Ցավալիորեն ունենք 2 զոհ եւ 1 վիրավոր: Թշնամին չի դադարեցնում կրակը: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ չեղարկում ենք մեր այսօրվա քարոզչական հանդիպումները Երեւանում: Թիմակիցներով գնում եմ Սոթքի ուղղությամբ՝ տեղում իրավիճակին ծանոթանալու եւ մեր հայրենակիցների հետ լինելու համար»:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մամուլի ծառայությունից հայտնեցին, որ իրենք եւս չեն իրականացնի քարոզարշավ:

Հայտարարություն տարածեց նաեւ «Հանուն սոցիալական արդարության» կուսակցությունը: «Ցավալի լուրեր են գալիս սահմանից. ունենք զոհված տղերք եւ վիրավորներ: Ցավակցում ենք բոլոր մեր հերոս տղերքի հարազատներին եւ մեզ բոլորիս: Աստված պահապան հայ ազգին եւ հայոց պետությանը»,-ասված է կուսակցության տարածած հաղորդագրության մեջ:

Նշենք, որ Երեւանի ավագանու ընտրություններում «Հանուն սոցիալական արդարության» կուսակցության ցուցակը գլխավորում է Արման Ղուկասյանը:

Երեւանի ավագանու ընտրություններում «Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակում ընդգրկված՝ ավագանու թեկնածու Իզաբելա Աբգարյանը իր ֆեյսբուքյան էջում գրել է, որ իրենց բակերում չսպասեն: Բակային քարոզարշավ չի նախատեսվում:

Քարոզարշավ չարեց նաեւ «Ապրելու երկիր» կուսակցությունը: Քաղաքապետի թեկնածու Մանե Թանդիլյանը ֆեյսբուքյան էջում գրեց. «Սահմանին ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ այսօր քարոզարշավ չեմ իրականացնելու: Հայ զինվորի կողքին ենք...»:

Ե՞ՐԲ ԿԼԻՆԵՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Այս ուսումնական տարին սկսվեց սկանդալով. դպրոցահասակների համար նախատեսված դասագրքերը Կրթության եւ այլ ոլորտների նախարարությունը չի հասցրել տպագրել: Երեկ հայաստանյան շատ դպրոցների աշակերտներ բոյկոտել են դասերը՝ ասելով, թե դասագրքեր չկան, «դասից կփախչեն»: Տարբեր ահազանգերի հետեւից գնալով՝ «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ ԿԳՄՍ նախարարությունը պետք է անցած տարվա նոյեմբերին անցկացներ մրցույթը, սակայն բավարար հայտեր չլինելու պատճառով մրցույթները հետաձգվել են: Եւ նախարարությունը անհրաժեշտ բարեխղճությամբ չի գործել, դրա համար էլ կրթական տարին սկսվեց առանց դասագրքերի:

Նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին պարզաբանեցին, որ գրքերը էլեկտրոնային տարբերակով հասանելի են նախարարության եւ ԿՏԱԿ-ի (Կրթության տեխնոլոգիաների ազգային կենտրոն) կայքում: Դպրոցներին հորդորել են գրքերը տպել եւ բաժանել երեխաներին, մինչեւ գրքերը տպագրված կլինեն: Այս իրավիճակը, ըստ նախարարության, ամենաքիչը կտեւի 2 ամիս, գրքերն այդ ընթացքում տպագրվելու են եւ բաժանվելու դպրոցներին: Շատ դպրոցներում աշակերտներին ասել են, որ կարող են «Զանգակ» կամ այլ գրախանութներից ավելի շուտ գնել դասագրքերը, մինչեւ դրանք դպրոց կհասնեն:

«Ժողովուրդ» օրաթերթին դիմած ծնողներն ասացին, որ որոշ դպրոցներում էլեկտրոնային գրքերը տրվել են ծնողներին եւ հրահանգել տպել, որ կարողանան երեխաները դպրոց գալ: Սեպտեմբերի 1-ի նախօրեին դպրոցներում հրավիրվել են ծնողական ժողովներ, ծնողներին ասել են՝ եթե անհրաժեշտություն լինի, կբաժանվեն անցած տարիների դասագրքերը: Հավելենք նաեւ, որ ԿԳՄՍ նախարարությունը 2023 թվականի հունվարի 1-ից մինչեւ սեպտեմբերի 1-ը «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ կնքել է 9մլն 800 հազար դրամ արժողությամբ պայմանագիր՝ դասագրքեր եւ այլ ուսումնական նյութեր մատակարարելու համար: «ԱՐՄԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ» ԱՁ-ի հետ կնքել է 360 հազար դրամ կազմող պայմանագիր՝ դասագրքերի մատակարարման համար: Դասագրքեր ձեռք բերելու համար պայմանագրեր են կնքվել նաեւ «ՖԻԼԻՆ» ՝7 մլմ 700 հազար դրամ, եւ «Արեւիկ հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ՝ 1 մլն 729 հազար դրամ արժողությամբ: Բրալյան տառատեսակով դասագրքերի ձեռք բերման պայմանագիրը կազմել է 12 մլն 844 հազար դրամ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից: Գրախանութներում կատարած շրջայցից հասկանում ենք, որ նախարարության ֆինանսական միջոցներով տպված գրքերը վաճառվում են գրախանութներում, սակայն դպրոցներում չկան: Ինչու, ինչպես՝ անհասկանալի է: 2018 թվականից մինչեւ 2022 թվականը ԿԳՄՍ նախարարությունը ընդհանուր առմամբ դասագրքերի տպման եւ հրատարակման համար ծախսել է 4 մլդ 403 մլն 612 հազար դրամ: Ամեն տարի հրատարակվել են գրքեր, որոնք բաժանվել են Հայաստանի եւ Սփյուռքի դպրոցներին: Նախարարությունից մեզ ասացին նաեւ. «Պատճառներից մեկն այն է, որ մենք դասագրքաստեղծ փորձ չունենք, մեր երկրում 10-15 տարուց ավել նման դասագրքեր չեն ստեղծվել, եւ նաեւ դա էր պատճառը, որ մեր փորձագիտական հանրույթի կողմից բավարար հայտեր չենք ստացել»: Ամեն տարի կատարվող միլիարդավոր ներդրումներից հետո, նախարարությունը հաշվի չառնելով ծրագրի ռիսկերը, ներդրել եւ գործարկել է նոր չափորոշիչներ 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանի աշակերտների համար, որոնք չի կարողանում կյանքի կոչել: Եթե երկու ամսից գրքերը հրատարակվեն, ապա նախարարությունը երեւի կսկսի խոսել ծրագրի հաջողությունների մասին, սակայն ինչ հաջողություն պիտի լինի, եթե ծրագիրն արդեն իսկ ձախողված է: Իսկ նախարար Ժաննա Անդրեասյանը դեռ պաշտոնավարում է, քանի որ Նիկոլ Փաշինյանին հետապնդում է բոլոր հրապարակային վայրերում ու անգամ իր ոլորտին չառնչվող միջոցառումներին է մասնակցում, եթե Փաշինյանի աչքին երեւալու շանս կա:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը ներկայացրել է ԱՀ նորանշանակ պետական նախարար Սամվել Շահրամանյանին:

Սեպտեմբերի 1-ին Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը կառավարության անդամներին եւ պետական կառավարման այլ մարմիններին, դատական համակարգի ղեկավար կազմին է ներկայացրել ԱՀ նորանշանակ պետական նախարար Սամվել Շահրամանյանին:

Երկրի ղեկավարը, շնորհակալություն հատնելով գործընկերներին համատեղ աշխատանքի համար, ներկայացրել է իր հրաժարականի դրդապատճառները: Նշելով, որ մինչեւ Ազգային ժողովի կողմից նոր նախագահի ընտրությունը շատ պատասխանատու ժամանակաշրջան է՝ Արայիկ Հարությունյանը շեշտել է, որ դրա հաղթահարումը եւ իրավական ճանապարհով իշխանափոխության իրականացումը պետականության պահպանման համար կարեւոր նշանակություն ունեն:

Նախագահը շնորհակալություն է հայտնել Գուրգեն Ներսիսյանին երկրի համար բարդ ժամանակաշրջանում պետական կառավարման համակարգում պատասխանատվություն ստանձնելու համար եւ Սամվել Շահրամանյանին՝ պատմական ծանր ժամանակաշրջանում պետական նախարարի պաշտոնը ստանձնելու առաջարկն ընդունելու համար:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ԾՐԱԳՐԻ

Երեւանի նախկին քաղաքապետ, դերասան Հայկ Մարությանը թեեւ հայտ է ներկայացրել ավագանու առաջիկա ընտրություններին մասնակցելու համար, բայց նա անգամ նախընտրական ծրագիր չունի:

Մարությանն իր սոցիալական էջերում պարբերաբար 2018թ.-ի ավագանու ընտրությունների իր նախընտրական հոլովակներով է կիսվում՝ թե որքան ավտոբուսներ է քաղաքապետարանն այն ժամանակ ձեռք բերել, կամ քանի ապօրինի շինություն է քանդել. այլ կերպ ասած, միայն նախընտրական հին ծրագրով է «հպարտանում», բայց «սեւեր-սպիտակներ» թեզի հեղինակ նախկին քաղաքապետն առաջիկա ընտրություններին մասնակցելու համար նոր ծրագիր չի ներկայացրել երեւանցիներին: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ քարոզարշավի սկզբից արձանագրել էր, որ նա բավականին փակ է, քարոզարշավի դուրս չէր գալիս, չէր շփվում երեւանցիների հետ, իսկ լրատվամիջոցներից, առհասարակ, խուսափում էր. միայն քարոզարշավի երրորդ օրը նա դժգոհություններից հետո որոշեց «արթնանալ» ու քարոզարշավ անել: Նախկին քաղաքապետը, սակայն, նախընտրական ծրագիր մինչ օրս չունի, հավանաբար, նա կա՛մ ժամանակ չի ունեցել նոր ծրագիր կազմելու, կա՛մ էլ պարզապես այնքան անլուրջ է մոտեցել ընտրական պայքարին, որ հարկ չի համարել անգամ նախընտրական ծրագիր ներկայացնել:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՄԻՇԵԼԸ՝ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ

Եվրոպական խորհրդի նախագահի մամուլի խոսնակը հաղորդագրություն է տարածել՝ ասելով, որ Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար իրավիճակն արագորեն վատթարանում է, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը տեղի բնակչության կարիքները բավարարելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտություն է տեսնում:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ հայտարարության մեջ նշվում է, որ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը Հայաստանի եւ Ադրբեջանի հետ քննարկել է Լաչինի միջանցքի վերաբացման եւ Աղդամի ճանապարհի բացման հարցերը եւ յուրաքանչյուր ճանապարհով մատակարարումների հետ կապված մանրամասները:

Հաղորդագրության մեջ նշվում է, որ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացն առաջ տանելու գործին աջակցել է նաեւ Հարավային Կովկասի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը:

«ԵՄ հատուկ ներկայացուցիչ Կլաարը եւ նախագահ Միշելի թիմը հաճախակի կապի մեջ են եղել Բաքվի, Երեւանի եւ Ղարաբաղի հայերի ներկայացուցիչների հետ՝ մուտքի ապաշրջափակման լուծում մշակելու համար: Տեղում ներկայիս հումանիտար իրավիճակն արագորեն վատթարանում է: Տեղի բնակչության կարիքների բավարարման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը հրամայական է», - նշված է հայտարարությունում:

Ըստ հայտարարության՝ Եվրոպական խորհրդի նախագահն առաջարկել է քայլ առ քայլ մոտեցում, որը «կարտացոլի Լաչինի միջանցքի լիարժեք շահագործման եւ Աղդամի երթուղու բացման հաջորդականությունը»:

«Այս քայլերի հաջորդականությունը եւ բեռների տեսակը, որը կմատակարարվի այս ճանապարհներից յուրաքանչյուրով, ինչպես նաեւ դրան հաջորդող ընթացակարգերը, եղել են վերջին քննարկումների առանցքում: ԵՄ-ն խորապես համոզված է, որ Լաչինի միջանցքը պետք է ապաշրջափակվի՝ համաձայն անցյալ համաձայնագրերի եւ Արդարադատության միջազգային դատարանի որոշման, եւ նշում է, որ մատակարարումների համար Աղդամի ճանապարհի օգտագործումը նույնպես կարող է լինել հրատապ եւ ամենօրյա հիմնական կարիքների ապահովման կոնկրետ եւ կայուն լուծման մաս», - գրված է հայտարարությունում:

Նշվում է, որ այս տարրերի շուրջ քննարկումները սկսվել են 2023 թվականի հուլիսի 15-ին՝ Բրյուսելում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների վերջին հանդիպումից հետո:

Նշենք նաեւ, որ շփումների ընթացքում ԵՄ-ն շեշտել է հակամարտության ժառանգությանն անդրադառնալու անհրաժեշտությունը՝ երկարաժամկետ կայուն լուծմանը նպաստելու համար:

«Այս առումով կարեւոր կլինի Բաքվի եւ նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում բնակվող հայերի ներկայացուցիչների միջեւ երկխոսությունը: Ղարաբաղի հայերի իրավունքներն ու անվտանգությունը պետք է երաշխավորվեն, իսկ կոնկրետ եղանակների շուրջ քննարկումները պետք է սկսվեն հնարավորինս արագ: Ղարաբաղի հայերի եւ Բաքվի միջեւ երկխոսությունը վստահության եւ հուսալիության ամրապնդման կարիք ունի: Այդ նպատակով ԵՄ-ն տարբեր առաջարկներ է ներկայացրել այս գործընթացին միջազգային աջակցության, ինչպես նաեւ տեղում ներգրավվածության առումով՝ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացմանն աջակցելու նպատակով», - նշված է հայտարարությունում:

Ըստ Եվրոպական խորհրդի նախագահի խոսնակի՝ վերոնշյալ բոլոր ջանքերի միակ նպատակն է ապահովել Բաքվի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների «անշրջելի կարգավորումը՝ի շահ տեղում գտնվող ողջ բնակչության»:

«Այժմ եկել է խիզախ փոխզիջումային լուծումների ժամանակը՝ նաեւ հաշվի առնելով ներկայիս էսկալացիան», - գրված է հայտարարությունում:

Եզրափակելով՝ Եվրոպական խորհրդի նախագահի խոսնակը նշում է, որ ներկա իրավիճակի լուծում գտնելու համար ԵՄ-ն շփումներ է ունեցել տարբեր միջազգային դերակատարների հետ:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ

ԱՄՆ Կոնգրեսի՝ Թոմ Լանտոսի անվան մարդու իրավունքների հանձնաժողովը սեպտեմբերի 6-ին կքննարկի Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրադրությունը:

Լսումներին իր փորձագիտական կարծիքը կներկայացնի Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենո Օկամպոն, որն օգոստոսի 7-ին զեկույց էր ներկայացրել՝ շեշտելով, որ «կան ողջամիտ հիմքեր՝ հավատալու, որ 2023 թվականին Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի դեմ ցեղասպանություն է իրականացվում»:

Իսկ Կոլումբիայի համալսարանում Մարդու իրավունքների ուսումնասիրման ինստիտուտի Խաղաղության կառուցման եւ մարդու իրավունքների ծրագրի տնօրեն Դեյվիդ Ֆիլիպսը վկայություն կտա Ադրբեջանի կառավարության մտադրությանն առնչվող փաստերի մասին:

Լսումները կկայանան սեպտեմբերի 6-ին, կհեռարձակվեն հանձնաժողովի կայքում:

ԱՐՑԱԽԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Սեպտեմբերի 1-ին Արցախի առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 11 բուժառու ուղեկցողների հետ միասին անհետաձգելի մասնագիտացված բժշկական օգնություն ստանալու համար, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ, տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են Արցախի ԱՆ-ից:

«Արեւիկ» բուժմիավորումում այս պահին ստացիոնար բուժում է ստանում 36 երեխա, 9-ը գտնվում է նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում է ստանում 97 հիվանդ, 6 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որից 2-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԳՆԱՑՔԸ ԳՈՐԾԱՐԿՎԵՑ

Գործարկվեց Գյումրի-Վանաձոր-Գյումրի էլեկտրագնացքը: «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից փորձնական գործարկվող ուղերթը կաշխատի ամեն օր, բացի չորեքշաբթի օրերից: Գյումրիից Վանաձոր ուղեւորության տեւողությունը 1 ժամ 32 րոպե է:

«Ժողովուրդ» օրաթերթը Շիրակի մարզպետարանից տեղեկանում է, որ գնացքը Գյումրու կառամատույցից մեկնելու է ժամը 07:30-ին, Վանաձորի կայարանում կլինի 09:00-ին: Էլեկտրագնացքը Վանաձորի կայարանից հակառակ ուղղությամբ կշարժվի 17:15-ին, Գյումրի կհասնի ժամը 18:47-ին:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Լեհաստանում Հայաստանի նախկին դեսպան Էդգար Ղազարյանի նկատմամբ բռնություն գործադրողի գործով նախաքննության ավարտ է հայտարարվել: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց Էդգար Ղազարյանը՝ նշելով, որ գործով մաս կա անջատված, եւ իրավապահները փնտրում են պատվիրատուին: Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում քննվող քրեական վարույթի շրջանակներում պարզվել են Է. Ղազարյանին վնաս պատճառելու դեպքի մի շարք հանգամանքներ:

Ըստ նախաքննական մարմնի՝ 2022 թվականի հոկտեմբերի 18-ին՝ժամը 13:00-ին, Էդգար Ղազարյանը ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում հաղորդում է ներկայացրել այն մասին, որ նույն օրը՝ժամը 11:15-11:30-ն ընկած ժամանակահատվածում, Երեւան քաղաքի Եղբայրության փողոցի 16/2 շենքի բակում երկու անհայտ անձինք հարձակվել են իր վրա, ձեռքերով եւ ոտքերով հարվածներ հասցրել մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ նույն օրը նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի հատկանիշներով, որի նախաքննությունը շարունակվել է ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում: Նախաքննության ընթացքում կատարվել են հարցաքննություններ, նշանակվել են մի շարք փորձաքննություններ, առգրավվել են դեպքի վայրում առկա անվտանգության տեսախցիկների տեսագրությունները եւ ենթարկվել զննության: Արդյունքում քննչական գործողություններով պարզվել են դեպքի էական հանգամանքներ, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց ինքնությունը, որոնք հանդիսանում են Առինջ գյուղի 48, 37 եւ 31 տարեկան բնակիչներ:

Ձեռնարկված անհրաժեշտ քննչական եւ վարութային անհետաձգելի գործողությունների արդյունքում անհատականացվել են նրանցից յուրաքանչյուրի գործողությունները, որոնց տրվել են իրավական գնահատականներ:

Այսպես, ձեռք բերված տվյալների համաձայն՝ 37-ամյա տղամարդը քննությամբ դեռեւս չպարզված շարժառիթով Էդգար Ղազարյանին ծեծի ենթարկելու՝վերջինիս մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ 2022թ. հոկտեմբերի 18-ին՝ ժամը 10:45-ի սահմաններում, 31-ամյա համագյուղացու հետ մեկ այլ՝48-ամյա համագյուղացու օժանդակությամբ վերջինիս վարած «Opel» մակնիշի ավտոմեքենայով գնացել են Երեւան քաղաքի Եղբայրության փողոցում գտնվող՝ Էդգար Ղազարյանի բնակության վայր, սպասել նրան: Նկատելով մոտեցող Էդգար Ղազարյանին՝ իրենց հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով աննկատ հարձակվել են նրա վրա, ձեռքերով եւ ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնել նրա մարմնի տարբեր մասերին՝ առողջությանը պատճառելով թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ, եւ դիմել փախուստի:

2023թ. հունիսի 15-ին վարույթ իրականացնող մարմնի կողմից միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին՝ 37 եւ 31-ամյա տղամարդկանց նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, իսկ 48-ամյա տղամարդու նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որոնք բավարարվել են: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չբացակայելու արգելքը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑ

ՄԵՔԵՆԱՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի եւ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցները համատեղ Երեւան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում իրականացրել են հսկողական աշխատանքներ: Արդյունքում բացահայտվել են, առանց մաքսային մարմնի գրավոր թույլտվության, մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցներն այլ անձանց հանձնելու մի շարք դեպքեր:

Այսպես, 2023 թ. օգոստոսի 1-ից 19-ն ընկած ժամանակահատվածում ստուգվել է 130-ից ավելի ՀՀ ներմուծված՝ հիմնականում վրացական պետհամարանիշերով ավտոտրանսպորտային միջոց: Ավտոմեքենաներից 16-ը հանձնված է եղել այլ անձի, ընդ որում՝մի քանի մեքենաների դեպքում տրված են եղել նոտարական վավերացմամբ լիազորագրեր: Նշված տրանսպորտային միջոցները տեղափոխվել են ոստիկանության հատուկ պահպանման տարածք, այնուհետեւ ՊԵԿ մաքսային հսկողության գոտի:

Նշենք, որ իրավախախտումների վերաբերյալ կազմվել են մաքսային կանոնների խախտման արձանագրություններ՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 308-րդ հոդվածի հատկանիշներով, եւ նյութերը փոխանցվել են ՊԵԿ իրավաբանական վարչություն:

Հավելենք, որ Պետական եկամուտների կոմիտեն եւս մեկ անգամ հիշեցնում է, որ, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 264-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքում պետք է գտնվեն հայտարարատուի փաստացի տիրապետման եւ օգտագործման տակ, եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածով: Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները կարող են հայտարարատուի կողմից փոխանցվել այն անձին, որին սեփականության իրավունքով պատկանում է տրանսպորտային միջոցը, ինչպես նաեւ առանց մաքսային մարմնի թույլտվության եւ առանց մաքսային հայտարարագրի թույլատրվում է անդամ պետության ֆիզիկական անձի կողմից ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը փոխանցել նրա ծնողներին, երեխաներին, ամուսնուն կամ կնոջը: Նշված արարքների խախտումը, այդ թվում՝ նոտարական լիազորագրերի հիման վրա մեքենաների հանձնումը, նախատեսում է վարչական պատասխանատվություն՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 308-րդ հոդվածի համաձայն, մաքսային արժեքի 20 տոկոսի չափով:

ՈՒՇԱԳՐԱՎ

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Արմեն Մարուխյանին մեղադրանք է առաջադրվել:

Նա 2023թ. փետրվարի 21-ին՝ ժամը 19:00-ից, մինչեւ փետրվարի 22-ը՝ժամը 03:00 ընկած ժամանակահատվածը, ապօրինի մուտք է գործել Գավառ քաղաքի Ալեքսանդր Ղամարյան փողոցի 19 հասցեի բնակարան, որի ննջասենյակի զգեստապահարանից հափշտակել է 17 կտոր ոսկյա զարդեր, այնուհետեւ այլ անձանց միջոցով վաճառել «Վաղարշ եւ Որդիներ Կոնցեռն» ՍՊԸ-ի աշխատակցին:

Բացի այդ, Արմեն Մարուխյանը եւ Կարեն Թոռչյանը 2023թ. մարտի 8-ին՝ ժամը 10:30-ից, մինչեւ մարտի 9-ը՝ժամը 01:40-ը, ապօրինի մուտք են գործել Գավառ քաղաքի Գ. Միքայելյան փողոցի 6-րդ նրբանցք 7-րդ անցուղու թիվ 2 բնակարան եւ հափշտակել 120.000 ՀՀ դրամ գումար եւ ոսկյա զարդեր:

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՆԵՐԻ ՀԵՏ

Ուշագրավ դեպք է տեղի ունեցել Ոստիկանության Շենգավիթի բաժնում:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ սեպտեմբերի 1-ի գիշերը Ա. Ավագյանը հարբած վիճակում վիճաբանել է մարմնավաճառների հետ ու սպառնացել Գայանե Մ.-ին:

Մարմնավաճառները դիմել են իրավապահներին, որից հետո Ա. Ավագյանին տեղափոխել են Ոստիկանության Շենգավիթի բաժին, որտեղ էլ սկսվել է «կռիվ կինոն»: Ավագյանը բաժնում սկսել է աղմկել, ագրեսիվ վարք դրսեւորել, հարվածել ոստիկաններին, կոտրել բաժնի ապակին ու վնասել ձեռքը:

ՄԵՔԵՆԱ Է ԱՅՐՎԵԼ

Սեպտեմբերի 1-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 15:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 911 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում ահազանգ է ստացվել, որ Դավիթ Բեկի փողոցում՝ «Դոմուս» խանութի հարեւանությամբ, ավտոմեքենա է այրվում:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր է ժամանել Երեւանի թիվ 3-րդ հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Մինչ հրշեջների ժամանումը Mercedes մակնիշի ավտոմեքենայում առաջացած կրակը փորձել են քաղաքացիները մարել, ապա ժամանած հրշեջները նախ՝ կանխել են կրակի տարածումը, ապա՝մարել այն:

Ամբողջությամբ այրվել է մեքենայի շարժիչի հատվածը:

Ըստ նախնական տեղեկությունների՝ բարեբախտաբար տուժածներ չկան:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վարորդը Երեւանի բնակիչ Կարեն Վարդանյանն է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ-ԻՆ

2023թ. փետրվարից «Դիլիջան» ազգային պարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռոբերտ Ալիխանյանը պարկի տարածքները վարձակալությամբ տվել է իր մտերիմներին: Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմոնյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել, թե Ռ. Ալիխանյանի՝ որպես «Դիլիջան» ազգային պարկի տնօրենի Ժ/Պ աշխատելու ժամանակ, նաեւ 2022 եւ 2021 թվականներին ազգային պարկում քանի հողամաս է տրվել վարձակալությամբ: Նախարարությունից պատասխանել են. «2023 թվականի փետրվարից մինչ այսօր Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝նախարարություն) «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) տարածքում մրցութային կարգով վարձակալությամբ է տրվել հինգ միավոր հողատարածք: 2021 եւ 2022 թվականների ընթացքում վարձակալությամբ հողատարածքներ չեն տրամադրվել»: Ֆեյսբուքյան «Դիլիջանցիք» խմբում անանուն հեղինակը Ռոբերտ Ալիխանյանին մեղադրանքներ է ներկայացրել նրա գործելակերպի եւ վարած կադրային քաղաքականության համար: Այդ հրապարակման մեջ նշված է, որ ազգային պարկի գիտության բաժնի պետի պաշտոնը, համաձայն հաստատված եւ գործող պաշտոնի անձնագրի, պահանջում է տվյալ ոլորտում երեք տարվա մասնագիտական գործունեություն: 2018թ.-ից մինչեւ 2023թ.-ի փետրվարը այդ պաշտոնը զբաղեցրել է Ռոբերտ Ալիխանյանը: Տնօրենի Ժ/Պ նշանակվելուց հետո ինքը գիտության բաժնի պետի պաշտոնում նշանակել է իր հարեւան Դավիթ Առուստամյանին, որը չի համապատասխանում պաշտոնի անձնագրով սահմանված չափորոշիչներին: Վերջինս 2008-2013թթ. աշխատանքային գործունեություն է ծավալել Տրանսպորտի եւ կապի նախարարության «Հեռահաղորդակցության հանրային կենտրոն» ՊՈԱԿ-ում, որը զբաղվում է հաճախականությունների ստուգմամբ եւ վերահսկմամբ, այնուհետեւ մի քանի տարբեր գազալցակայաններում եղել է հերթափոխի պետ: Դ. Առուստամյանի փոխարեն՝գիտական բաժնի աշխատանքները կատարում են բաժնի փորձառու եւ բանիմաց աշխատակիցները: Սեպտեմբերն է, սակայն ազգային պարկը դեռեւս չունի ավտոմեքենաների վառելիք, մեքենաները գտնվում են անսարք վիճակում: Անտառների պահպանությանը ծառայող մի շարք մեքենաներ անսարքության եւ վառելիքի բացակայության պատճառով կայանած են: Հրապարակման մեջ նաեւ ասվում է, որ Ռ. Ալիխանյանը իր պաշտոնավարման հենց սկզբից անհաշտ հարաբերությունների մեջ է գտնվել «Աղավնավանք» տեղամասի պետ Հովակիմ Խոջայանի հետ, քանի որ այդ պաշտոնում իր նախընտրած թեկնածուն իր մտերիմ Արտեմ Ստեփանյանն էր: Այդ տեղամասը միշտ աչքի է ընկել իրավախախտումների ցածր քանակով եւ բարձր կարգապահությամբ: Ռոբերտ Ալիխանյանն ամեն առիթ բաց չի թողել Հ. Խոջայանին կարգապահական տույժի ենթարկելու համար, որպեսզի ապահովի նկատողությունների քանակ, ինչով կարող էր ազատվել Հ. Խոջայանից: Մի խորհրդակցությունում Ռ. Ալիխանյանը որոշել է, որ Հ. Խոջայանը այլեւս չպետք է կատարի տեղամասի պետի պարտականությունները, եւ նրա փոխարեն այդ գործը կկատարի Արտեմ Ստեփանյանը, վերցրել է պահպանություն իրականացնելու համար Խոջայանին կցված մեքենան եւ տվել Ա. Ստեփանյանին: Այդ վիճակը տեւել է մոտ մեկ ամիս, որից հետո Ռ. Ալիխանյանի առաջարկությամբ Հ. Խոջայանը գրել է աշխատանքից ազատման դիմում՝ տարածքը հանձնելով հարեւան տեղամասի պետ Միհեր Հովսեփյանին: Կատարված հանձնման-ընդունումից պարզվել է, որ բացակայում է տեղամասի հաշվեկշռում գտնվող 1500 խմ փայտը, որի արժեքը մոտ 30 միլիոն դրամ է: Մոտ մեկուկես ամիս առաջ ավարտված գարնանային ստուգումների արդյունքում տեղամասում առկա է եղել հաշվեկշռում գտնվող փայտի ամբողջ քանակը, ինչը արձանագրել է ստուգող հանձնաժողովը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՉՏՊՎԱԾ ԳՐՔԵՐԸ

Օրեր առաջ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հայրենի նախարարությունը չի կարողացել տպագրել դպրոցական նոր դասագրքերը, ու ԿԳՄՍՆ-ից դպրոցների տնօրեններին հանձնարարել են դրանց էլեկտրոնային տարբերակներից թեմաները տալ եւ տալ աշակերտներին:

Իսկ շատ դպրոցականներ սեպտեմբերը կսկսեն առանց գրքերի, քանի որ հին չափորոշիչները փոխված են, նորերն էլ՝ դեռ չմշակված:

Ստացվում է՝ նախարարությունը անգամ չի կարողանում մրցույթ հայտարարել, պատշաճ պատրաստվել Գիտելիքի օրվան, ու պետք է դպրոցները սպասեն, մինչեւ այդ հարցը կլուծվի:

Ավելի ուշ ԿԳՄՍՆ տարածեց հայտարարություն, որում, մասնավորապես, ասվում էր, որ ԿԳՄՍ նախարարությունը շրջաբերական նամակով դիմել է Երեւանի քաղաքապետարանին եւ ՀՀ մարզպետարաններին, որով առաջարկվում է իրենց ենթակա ուսումնական հաստատություններին հանձնարարել 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանների դասագրքերի էլեկտրոնային տարբերակների պատճենները տրամադրել աշակերտներին կամ ուսուցումը կազմակերպել էլեկտրոնային եղանակով:

ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ նշված դասարաններում 2023/24 ուսումնական տարում ներդրվում է հանրակրթության նոր չափորոշիչը, որով պայմանավորված՝ փոխվում են նաեւ դասագրքերը եւ ուսումնական նյութերը: Նոր դասագրքերի տպագրությունն ընթացքի մեջ է, եւ դրանք փուլային տարբերակով կառաքվեն դպրոցներ սեպտեմբեր ամսվա ընթացքում:

Նույնաբովանդակ գրություն է ուղարկվել նաեւ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների եւ ոչ պետական դպրոցների տնօրեններին: Դպրոցներին հանձնարարվել է զերծ մնալ ծնողներին դասագրքերը գնելու կամ դրանց էլեկտրոնային տարբերակները պատճենելու ուղղորդումներից: Դպրոցն իր միջոցների հաշվին պետք է կազմակերպի դասագրքերի էլեկտրոնային տարբերակներից տպված համապատասխան թեմաների էջերը սովորողներին բաշխելու աշխատանքները:

Հաշվի առնելով վերջին օրերին քաղաքացիներից ստացված ահազանգերն ու դժգոհությունները՝ տեղեկացնում ենք, որ դասագրքերի խնդիրը քննարկվել է օգոստոսյան խորհրդակցությունների ժամանակ՝ ՀՀ բոլոր մարզերի, Երեւանի քաղաքապետարանի, ԿԳՄՍՆ ենթակայության, ինչպես նաեւ ոչ պետական դպրոցների տնօրենների մասնակցությամբ: Դպրոցները տեղեկացված են եղել անցումային փուլի խնդիրների եւ ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու մասին:

Միաժամանակ հայտնում ենք, որ քաղաքացիները դասագրքերի, ինչպես նաեւ ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ իրենց հուզող հարցերով կարող են դիմել ԿԳՄՍ նախարարության «Թեժ գիծ»՝ 010-599-600 հեռախոսահամարով:

Հիշեցնենք, որ դասագրքերի ապահովման գործընթացն իրականացվում է սահմանված կարգով, համաձայն որի՝ տարրական դասարանների դասագրքերն աշակերտներին տրվում են պետական միջոցների հաշվին՝ անվճար, իսկ մյուս դասարանների դասագրքերը՝ ներդրումային գումարներով:

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ՎԵՐԱԴԱՐՁԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝ Wildberries-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Wildberries առցանց առեւտրի հարթակը հայտարարել է ապրանքները վերադարձնելու նոր հնարավորություն գործարկելու մասին, եթե գնորդն ապրանքն օգտագործելու ընթացքում թերություն է հայտնաբերել: Այժմ գնորդները կարող են անմիջապես կապվել վաճառողի հետ՝ վճարումից 14 օր հետո գնումը վերադարձնելու համար:

Դրա համար անհրաժեշտ է գրել վաճառողին չատով անձնական օգտահաշվի «Գնումներ» բաժնում: Վաճառողը հայտը դիտարկելուց հետո կկարողանա ընդունել կամ մերժել այն, ինչպես նաեւ հաճախորդի հետ քննարկել փոխհատուցման ձեւաչափը՝ վերադարձնել միջոցները, պայմանավորվել փոխարինող ապրանք տրամադրելու շուրջ կամ առաքել պատվերի պակասող մասը, եթե ինչ-ինչ պատճառներով այն ամբողջությամբ չի առաքվել, օրինակ՝ բացակայում է կոճակը:

Նշենք նաեւ, որ հայտը հաստատելուց եւ փոխհատուցման ձեւաչափը համաձայնեցնելուց հետո գնորդը ապրանքը վերադարձնում է Wildberries-ի պատվերի ընդունման կետ կամ հենց վաճառողին՝ կախված ձեռք բերված պայմանավորվածություններից: Գնման համար նախատեսված միջոցները կգանձվեն վաճառողի հաշվի մնացորդից եւ կվերադարձվեն գնորդին:

«Ցանկանում ենք մեր առցանց հարթակում օգտատերերի եւ վաճառողների միջեւ փոխգործակցության փորձառությունը դարձնել էլ ավելի պարզ եւ հարմարավետ եւ հեռացրել ենք նրանց միջեւ անհարկի միջանկյալ օղակը: Այժմ նրանք կարող են ոչ միայն ուղղակիորեն շփվել միմյանց հետ եւ տեղեկություններ փոխանակել ապրանքի բնութագրերի եւ առանձնահատկությունների մասին, այլեւ ընտրել փոխհատուցման ամենահարմար ձեւաչափը երկուսի համար: Սա վաճառողներին լրացուցիչ գործիք կտրամադրի հաճախորդների հավատարմությունը բարձրացնելու եւ սեփական տեսականին կառավարելու համար»,- պարզաբանել են Wildberries-ի մամուլի ծառայությունից:

Հավելենք, որ ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, եթե գնորդը հայտնաբերում է թերություն նախքան գնման համար վճարելը, ապա այդպիսի ապրանք գնած քաղաքացին կարող է հրաժարվել դրանից ստանալուց հետո: Դա անելու համար բավական է այն վերադարձնել թողարկման կետի մենեջերին կամ առաքիչին, որը բերել է պատվերը: Այս դեպքում ապրանքի արժեքը, ներառյալ հետադարձ տեղափոխումը, չի պահվում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 20 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

ՔԱՐՈԶԱՐՇԱՎՆ ՈՒ ԳՈՎԱԶԴԸ

Նախընտրական քարոզարշավի մեկնարկին հաջորդել են գովազդային վահանակների բաշխման աշխատանքները:

Ըստ թեկնածուների՝ բաշխումը կատարվել է վիճակագրության սկզբունքով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանի համապատասխան որոշմամբ: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ում են վճարելու թեկնածուները գովազդային վահանակներին իրենց պաստառները փակցնելու համար: «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ գործակալությունն այն կազմակերպություններից է, որին դիմել են նախընտրական գործընթացում գովազդային վահանակների վրա գովազդ ապահովելու համար:

«Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ն պատկանում է ՀՀԿ նախկին պատգամավոր Գարեգին Նուշիկյանին: Հաջորդ գործակալությունը, որը զբաղվում է նախընտրական քարոզարշավի պաստառների տեղադրմամբ, «ԷԳԱ» ՍՊԸ-ն է, որի տնօրենն է Թամարա Հակոբյանը:

2018 թվականին օրենսդրական մեծ փոփոխության արդյունքում ավտոմոբիլային ճանապարհներին տեղադրված բոլոր գովազդային վահանակների համար օրենսդիրը նախատեսել է վճարել ճանապարհային հարկ, ինչի պատճառով ապամոնտաժվեցին ընկերության մի քանի վահանակ: Գովազդային գործակալությունների շարքում է նաեւ «Միկմետալ» ՓԲԸ-ն, որը ամրաններ արտադրող եւ վճառող ընկերություն է, որի 75 %-ի բաժնետեր է Ազգային ժողովի նախկին պատգամավոր Վահան Հարությունյանը, իսկ մնացած 25 %-ի բաժնետերը նրա հայրն է՝ Միխաիլ Հարությունյանը:Հաջորդ կազմակերպությունը «ԲԻ ԲԻ Գրուպ» գովազդային գործակալությունն է, որի խորհրդականը Երեւանի քաղաքապետարանի նախկին պաշտոնյա Արազ Բաղդասարյանն է: Քաղաքապետարանի արտաքին ձեւավորման եւ գովազդի վարչության նախկին պետ Արազ Բաղդասարյանը հանդիսանում է նաեւ «Արբա Մեդիա» ՍՊԸ գովազդային գործակալության սեփականատիրոջ որդին: Հավելենք նաեւ, որ Երեւան քաղաքում գերակշռում են «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պաստառները, փոքրամասնություն են համարվում մյուս կուսակցությունները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը պտտվել է քաղաքում եւ ֆիքսել, որ քաղաքը, մանավանդ՝ Կենտրոն վարչական շրջանը, ամբողջովին պատված է ավինյանական կապույտով, իսկ մյուս կուսակցություններին հատկացված են քաղաքի ոչ այնքան տեսանելի անկյուններում գտնվող վահանակները:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

Գ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 1

Թողարկողի անվանումը՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն: «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական պայմանները	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	100 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	50, 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	5,000,000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 5%
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Երկրորդային շուկա	Հայաստանի Ֆոնդային Բորսա
Թողարկման ամսաթիվ	05.09.2023
Տեղաբաշխման ժամկետ	05.09.2023թ. – 06.10.2023թ.
Տեղաբաշխող	ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռքբերել «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ տեղաբաշխման ավարտից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում (ցուցակումից հետո) մասնավորապես Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ ֆոնդային բորսայի առեւտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռքբերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի եւ բանկային հաշիվներ բացել, համապատասխանաբար, «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ–ում եւ «Յունիբանկ» ԲԲԸ–ում: «Յունիբանկը» հանդիսանում է Հաշվի օպերատոր, հետևաբար բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց բանկում:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվը	05.09.2026թ.

Ծանուցում

«Յունիբանկ» ԲԲԸ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը եւ պարտատոմսերի մարումը կիրականացվի հետեւյալ ժամանակացույցով.
Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում՝ 05.12.2023թ.
Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում՝ 05.03.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում՝ 05.06.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում՝ 05.09.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում՝ 05.12.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում՝ 05.03.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում՝ 05.06.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում՝ 05.09.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների իներորդ վճարում՝ 05.12.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում՝ 05.03.2026թ.
Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում՝ 05.06.2026թ.
Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում՝ 05.09.2026թ.
Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաեւ մարման գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ կազմված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա «Յունիբանկ» ԲԲԸ-ում՝ պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2

Թողարկողի անվանումը՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն: «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական պայմանները	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	10,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի քանակը	100, 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	1,000, 000, 000 ՀՀ դրամ
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 11%
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Երկրորդային շուկա	Հայաստանի Ֆոնդային Բորսա
Թողարկման ամսաթիվ	05.09.2023
Տեղաբաշխման ժամկետ	05.09.2023թ. – 06.10.2023թ.
Տեղաբաշխող	ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռքբերել «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ տեղաբաշխման ավարտից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում (ցուցակումից հետո) մասնավորապես Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ ֆոնդային բորսայի առեւտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռքբերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի եւ բանկային հաշիվներ բացել, համապատասխանաբար, «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ –ում եւ «Յունիբանկ» ԲԲԸ –ում: «Յունիբանկը» հանդիսանում է Հաշվի օպերատոր, հետեւաբար բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց բանկում:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվը	05.09.2026թ.

Ծանուցում

«Յունիբանկ» ԲԲԸ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը եւ պարտատոմսերի մարումը կիրականացվի հետեւյալ ժամանակացույցով.
Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում05.12.2023թ.
Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում05.03.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում05.06.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում05.09.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում05.12.2024թ.
Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում05.03.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում05.06.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում05.09.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների իներորդ վճարում05.12.2025թ.
Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում05.03.2026թ.
Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում05.06.2026թ.
Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում՝ 05.09.2026թ.
Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաեւ մարման գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ կազմված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա «Յունիբանկ» ԲԲԸ-ում՝ պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:Յունիբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՊԱՏԵՐԱԶՄ

ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏԵՐԻՆ

Ադրիլյան քառօրյա, ապա 44-օրյա պատերազմն ու նրան հետեւող իրադարձությունները մեզնից խլեցին մեր եղբայրներին, ամուսիններին ու ընկերներին, մեզնից տարան մեր ամենաթանկերին՝ մեր որդիներին: Ոչինչ չէր մնում անելու, բան պահել նրանց պաշտպանած հայրենիքն ու անընդհատ, անդադար խոսել, հիշել մեր հերոսներին ու նրանց կատարած սխրագործությունները: Բոլոր տղաներն էլ մերն են, մեր միս ու արյունը, բայց, ինչ-որ պահից սկսած, նրանք եւս բախվեցին անհավասարությանը:

Կան զինվորներ, որոնց մասին անընդհատ խոսվում է, նրանց մասին պարբերաբար մամուլում հրապարակումներ են տեղի ունենում, համացանցում նրանց նկարներն են, եւ դա գովելի է եւ դեռ մի բան էլ քիչ՝ իրենց կատարած սխրանքների համար, որոնց շնորհիվ այսօր մենք ապրում ենք: Սակայն զուգահեռ իրականության մեջ կան տղաներ, որոնց մասին չի խոսվում, նրանց չեն հիշում կամ հիշում են քիչ, ծնողներն էլ, խեղճ ու կրակ իրենց որդուն բաժին հասած մի բուռ հողն ու տան մի անկյունը սուրբ դարձրած, շարունակում են ապրել իրենց բաժին հասած կյանքն ու ճակատագիրը:

Անհավասար այս պայմանները տղաների համար պետք է պետական մակարդակով վերահսկվի՝ կա՛մ բոլորին, կա՛մ ոչ մեկին, կա՛մ բոլորը, կա՛մ ոչ մեկը: Նման անհավասարության հերթական դրսեւորումներից մեկի հետքերով է գնացել «Ժողովուրդ» օրաթերթը: Խոսքը վերաբերում է մայրաքաղաքի տարբեր շենքերի ու տների պատերին զինվորների նկարներով գրաֆիտիի պատկերմանը:

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն դիմում են բազմաթիվ ծնողներ՝ խնդրանք-բողոքով, որ այս անհավասարությունը վերանայվի պետական մակարդակով: Քանի որ նման դեպքեր մեծամասամբ դիտվում են մայրաքաղաքում, «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Երեւանի քաղաքապետարանի հետ՝ պարզելու՝ արդյոք որեւէ կերպ վերահսկվում կամ կարգավորվում է այս երեւույթը, սակայն մեզ տեղեկացրին, որ այս մասով օրենքի տեսանկյունից որեւէ կարգավորում չկա:

«Իհարկե, սա չի նշանակում, որ ով ուզենա, կարող է պատին սրտի կամեցածը նկարել, սակայն զինվորների պարագայում այլ է. որեւէ մեկը մերժողական դիրքորոշում ունենալ չի կարող այս պարագայում»,- տեղեկացրին Երեւանի քաղաքապետարանից:

Փաստացի ստացվում է, որ կա օրենքի բաց, ըստ այդմ՝ կարգավորել այս ամենը չի ստացվում: Այն ծնողները, որոնք հնարավորություն ունեն իրենց որդիների նկարները շենքերի պատերին նկարելու, կնկարեն, որոնք ոչ, այդպես էլ թող նայեն հնարավորություն ունեցողներին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԹԱՆԳԱՐԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՑՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանի պատմության թանգարանում տեղի կունենա «Ձայներ հավաքական անցյալից. 19-րդ դարի հայկական գորգարվեստը. նմուշներ Ջեյմս Թուֆենկյան հավաքածուից» խորագրով ժամանակավոր ցուցադրության բացումը:

19-րդ դարի տասնյակ անզուգական հայկական գորգերը, որոնք Ջեյմս Թուֆենկյանը հավաքել է տարիներ շարունակ, արտացոլում են հայկական գորգագործական լավագույն ավանդույթների բազմազանությունը: ԱՄՆ-ից բերված հայկական գորգարվեստի նմուշների այս ընտրանին ավելի քան 400 քմ ցուցադրական տարածքում առաջին անգամ ներկայացվելու է հանրությանը՝ բացահայտելով ուրույն մի ժառանգություն, համադրվելով բնօրինակ լուսանկարների ու այլ ցուցադրական միջոցների հետ:

«Դեռեւս նախորդ տարվանից Հայաստանի պատմության թանգարանում բացված ազգային հավաքածուին զուգահեռ՝ ներկայացվող նմուշները նորովի են բացահայտելու մեր հավաքական անցյալը: Ցուցահանդեսի նպատակներից է գորգարվեստի վերածնունդը, որի ուղղությամբ «Թուֆենկյան գորգեր» ընկերությունը մեծածավալ աշխատանքներ է իրականացնում»,- ցուցադրության մասին ասել է Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը:

Նշենք, որ Թուֆենկյան ընկերության սեփականատեր, գորգերի փորձագետ եւ հավաքորդ Ջեյմս Թուֆենկյանի խոսքով՝ նա իր առջեւ խնդիր չէր դրել հավաքելու հայկական ամենահին, հազվագյուտ ու պատմականորեն ամենանշանակալի գորգերը. «Ընդհակառակը, ես ցանկանում էի հավաքել, պահպանել եւ աշխարհին ցույց տալ հայկական տնայնագործ գորգերի ամենագեղեցիկ, հմայիչ ու խորհրդավոր նմուշները: Ես հիացած եմ արվեստի այս պատկերավոր նմուշներով եւ այն հանգամանքով, որ այս գորգերը ստեղծել են ոչ թե հայտնի վարպետներ, որոնք հարստություն են կուտակել՝ դրանք վաճառելով, այլ 150 տարի առաջ հեռավոր լեռնային վայրերում բնակված հասարակ ջուլհակներ: Նրանք ստեղծել են այս նմուշները, քանի որ սիրել են իրենց արհեստը, հպարտացել իրենց գործով եւ միաժամանակ ցանկացել ընտանիքի անդամներին այսպիսի իրեր ունենալու բերկրանք պատճառել»,- նշեց նա:

Նշենք, որ Ջեյմս Թուֆենկյանի մասնավոր հավաքածուն համադրվել է Հայաստանի պատմության թանգարանի ազգագրագետների կողմից դաշտային աշխատանքների ժամանակ արված 20-րդ դարասկզբի արխիվային լուսանկարների եւ լուսանկարիչ Դիմիտրի Երմակովի արհեստանոցում ստեղծված դիմանկարների հետ: Վերջիններս ազգագրական կարեւոր վկայություններ են հայկական գորգագործական ավանդույթների եւ դարեր շարունակ առօրյայում դրանց ունեցած նշանակության մասին: Արցախում եւ Հայաստանի այլ բնակավայրերում արված ժամանակակից լուսանկարները, ինչպես նաեւ «Թուֆենկյան գորգեր» ընկերության մասին պատրաստված ֆիլմը, որոնք ընդգրկվել են ցուցադրության մեջ, օգնում են ավելի լավ հասկանալ հայկական գորգագործության համատեքստը երեկ, այսօր եւ վաղը:

Հավելենք, որ ցուցադրությունը հանրության համար բաց կլինի մեկ տարի, որի շրջանակում նախատեսվում են տարբեր միջոցառումներ:

ԱՇԽԱՐՀ

ՓՈԽԵԼ Է ԱՆՈՒՆԸ

Մեկ տարի առաջ Քլոեն եւ Տրիստան Թոմփսոնը փոխնակ մոր օգնությամբ որդի են ունեցել: Սկզբում աստղերը երեխային թաքցնում էին հետաքրքրասեր աչքերից, սակայն շուտով The Kardashians-ի թողարկումներից մեկում երկրպագուներին ծանոթացնում էին փոքրիկի հետ: Դուք կհարցնեք՝ ինչ է նրա անունը, եւ պատասխանն այնքան էլ պարզ չի լինի, որքան կարծում եք...

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ծնվելուց անմիջապես հետո Քլոեն եւ Տրիստանը չեն իմացել՝ ինչ անվանեն երեխային, ուստի ծննդյան վկայականում նրա անունը նշված էր որպես Baby Kardashian: Բայց անցել է ավելի քան մեկ տարի (մասնավորապես՝ 13 ամիս), եւ աղջիկը պաշտոնապես փոխել է որդու անունը: Հիմա նա Տատում Թոմփսոն է:

Հիշեցնենք, որ Քլոե Քարդաշյանը հարաբերությունների մեջ էր Թրիստան Թոմփսոնի հետ: Նրանք բաժանվել են 2019թ.: Բասկետբոլիստը մեկ անգամ չէ, որ խաբել է ռեալիթի հեռուստաաստղին: Անցյալ ամառ՝ ընտանիքում համալրման լուրերից հետո, շատերը սկսեցին խոսել զույգի հնարավոր վերամիավորման մասին: Պարզվել է, որ Տրիստանը երեխա է ունենալու մեկ այլ կնոջից այն բանից հետո, երբ թվում էր, թե Քլոեն վերջապես խզել է հարաբերությունները մարզիկի հետ: Վերջին շրջանում նրանց հաճախ կարելի է միասին տեսնել: Վերջերս Քլոեն խոստովանել է, որ նրանք կրկին միասին են ապրում: Բացի որդուց, նրանք միասին մեծացնում են իրենց դստերը՝ Թրուին:

ՏՎԻՉ՝ ՔԱՐԱՐԾՎԻ ՎՐԱ

Հայաստանում առաջին անգամ արբանյակային տվիչ է տեղադրվել քարարծվի վրա, ինչը հնարավորություն է տալիս ուսումնասիրել նրա տեղաշարժը, վարքագծային առանձնահատկությունները. այս մասին հաղորդագրություն է տարածել Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) հայաստանյան մասնաճյուղը:

Վերջերս ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմին զանգ էր ստացվել, որ Ալավերդի քաղաքի հարակից հատվածներում հյուծված, երիտասարդ քարարծիվ են գտել: Տեսչական մարմնի աշխատակիցները քարարծվին տեղափոխել էին «էնդեմիկ եւ վտանգված տեսակների պահպանություն» հիմնադրամ, որտեղ նա ստանում է համապատասխան խնամք:

«Մեր մասնագետները քարարծվի վրա հաջողությամբ տեղադրել են արբանյակային տվիչ, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու չուն, լոկալ տեղաշարժերը, վարքագծային առանձնահատկությունները, տեսակների էկոլոգիային եւ կենսաբանությանը վերաբերվող այլ հետաքրքիր փաստեր, վեր հանել սպառնացող վտանգների մի մասը, օրինակ՝ թռչնի համար վտանգավոր էլեկտրասյուներն ու լարերը եւ այլն»,- ասված է հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ թռչունը մի քանի օրից բաց կթողնվի վայրի բնություն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՐԱՎԵՐԸ ՄԵՐԺԵՑ

Ռուսական «Պարի Նիժնի Նովգորոդի» 22-ամյա հարձակվող Էդգար Սեւիկյանը չի ընդունել Ռուսաստանի հավաքականի հրավերը:

«Ժողովուրդ» օրաթերթը այս մասին տեղեկանում է ֆուտբոլիստի տարածած հայտարարությունից:

«Շատ հաճելի է, որ Ռուսաստանի հավաքականի մարզչական շտաբը ուշադրություն է դարձել եւ գնահատել է իմ աշխատանքն ու արդյունքները: Ռուսաստանն ինձ շատ բան է տվել իմ պրոֆեսիոնալիզմի եւ կարիերայի համար, սակայն ես չեմ կարողանա ընդունել Ռուսաստանի հավաքականի հրավերը, քանի որ արդեն որոշել եմ հանդես գալ Հայաստանի հավաքականում: Հույս ունեմ, որ երկրպագուները ըմբռնումով կընդունեն իմ ընտրությունն ու ինքնուրույն որոշումը»,- նշել է Էդգար Սեւիկյանը:

Հայաստանի հավաքականը Թուրքիայի եւ Խորվաթիայի հավաքականների դեմ առաջիկա ընտրական հանդիպումներին չի հրավիրել Սեւիկյանին, որը Մոսկվայի «Լոկոմոտիվի» սան է, 2017-ին տեղափոխվել էր իսպանական «Լեւանտե»: Այս ամռանը նա ազատ գործակալի կարգավիճակում միացել է «Պարի Նիժնի Նովգորոդին»:

«ՉԵԼՍԻԻ» ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

21-ամյա անգլիացի կիսապաշտպան Քոուլ Փալմերը Անգլիայի չեմպիոն, գավաթակիր, Չեմպիոնների լիգայի գավաթակիր, Եվրոպայի սուպերգավաթակիր «Մանչեսթեր Սիթիից» տեղափոխվեց Լոնդոնի «Չելսի». հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը:

«Չելսին» 7 տարվա պայմանագիր է կքնել Փալմերի հետ:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ տրանսֆերի գումարը կկազմի 40 միլիոն ֆունտ ստերլինգ: Նախատեսված է նաեւ 5 միլիոն ֆունտ ստերլինգ բոնուս:

Փալմերը «Մանչեսթեր Սիթիի» սան է: Գլխավոր թիմում մասնակցել է 41 հանդիպման, խփել է 6 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում:

ԿԱՐԵՎՈՐ ՖԻԳՈՒՐԸ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» գերմանացի հարձակվող Թոմաս Մյուլերը մեկնաբանել է Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի վիճակահանության արդյունքները: Ա խմբում «Բավարիայի» մրցակիցները կլինեն անգլիական «Մանչեսթեր Յունայթեդը», դանիական «Կոպենհագենը» եւ թուրքական «Գալաթասարայը»:

«Շատ ուրախ ենք, որ Չեմպիոնների լիգան վերադառնում է: Կունենանք մի քանի մեծ դիմակայություններ երեք թիմերի հետ մեծ քաղաքներից: «Մանչեսթեր Յունայթեդը» կարեւոր ֆիգուր է համաշխարհային ֆուտբոլում: Նրանց մարզում է «Բավարիայի» պահեստային թիմի նախկին գլխավոր մարզիչ Էրիկ տեն Հագը:

«Կոպենհագենն» ու «Գալաթասարայը» նույնպես հրաշալի թիմեր են: Շաբաթվա կեսի հանդիպումները առանձնահատուկ են մեր օրացույցում»,- Մյուլերի խոսքը մեջբերում է «Բավարիայի» մամուլի ծառայությունը:

● *Սեպտեմբերի 9-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Կապույտ մորուքի յոթ կանայք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՐԺՈՒՅԹ

ՀԱՐՑ. Ինչո՞վ են պայմանավորված ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները:

Սմբատ Վերդյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ազգային արժույթի փոխարժեքը ձեւավորվում է արժութային շուկայում առկա առաջարկի ու պահանջարկի եւ դրանց փոփոխությունների ազդեցության ներքո: Եթե արտահանման աճի կամ կապիտալի ներհոսքի հետեւանքով տվյալ ազգային արժույթի շուկայում ավելանում է արտարժույթի առաջարկը, ազգային արժույթի դիրքերն անհրաժեշտաբար ամրապնդվում են: Համապատասխանաբար, ներմուծման աճը կամ կապիտալի արտահոսքը նպաստում են ազգային արժույթի դիրքերի թուլացմանը: Արժութային շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը կարող է փոփոխվել նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնցից են, մասնավորապես, կառավարության ծախսերը, Կենտրոնական բանկի ինտերվենցիաները, արժութային կարգավորման ոլորտում օրենսդրական փոփոխությունները, էներգակիրների գների տատանումները, բնակչության մոտ ձեւավորվող սպասումները:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տեւական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով (օրինակ՝կայուն տնտեսական աճով պայմանավորված ազգային արժույթի արժեքավորումը), կարող է կրել սեզոնային բնույթ (երբ, օրինակ, ներմուծման ու արտահանման սեզոնները տարբեր են) եւ կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների (օրինակ՝ կարճաժամկետ ֆինանսական ներհոսքի կամ արտահոսքի) ազդեցության արդյունք է:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Քոլեջի ո՞ր շրջանավարտը կարող է ուսումը շարունակել բուհի 2-րդ կուրսում եւ կրթության ինչ ձեւով:

Զոյա Բաղալյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստա-տու-թյուններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N 752-Ն որոշմամբ:

Հավակնորդների կրթությունը բուհում կազմակերպվում է հետեւյալ կերպ՝ մինչեւ 2014 թվականը ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած եւ նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը, իսկ հետագա ժամանակաշրջանում ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած եւ նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամաքանակների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 եւ ավելի տոկոս կազմող տարբերությունը:

Հավակնորդը կամ քոլեջը համապատասխան փաստաթղթերը ներկայացնում է բուհ մինչեւ տվյալ տարվա օգոստոսի 30-ը:

Հատկացված տեղերից ավելի դիմումների դեպքում սահմանված կարգով անցկացվում է մրցույթ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սեպտեմբերի 1-ը նշվում է Հայաստանի դպրոցներում եւ այլ ուսումնական հաստատություններում որպես Գիտելիքի ու դպրության օր:

Տոնի առթիվ մայրաքաղաքի բոլոր հին եւ նոր ավտոբուսները զարդարված էին փուչիկներով այդկերպ օրը տոնական դարձնելու համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+9 +13	+26 +29
Կոտայքի լեռներ	+9 +12	+26 +29
Կոտայքի նախալեռներ	+17 +19	+27 +29
Գեղարքունիք	+10 +14	+21 +24
Լոռի	+8 +12	+21 +26
Տավուշ	+12 +16	+25 +28
Արագածոտնի լեռներ	+9 +12	+25 +28
Արագածոտնի նախալեռներ	+16 +20	+27 +31
Արարատ	+18 +21	+32 +34
Արմավիր	+17 +19	+32 +34
Վայոց ձորի լեռներ	+9 +12	+24 +26
Վայոց ձորի նախալեռներ	+18 +21	+32 +34
Սյունիքի հովիտներ	+17 +21	+26 +30
Սյունիքի նախալեռներ	+12 +14	+22 +25
ԼՂՀ	+17 +19	+26 +30
Երեւան	+19 +21	+32 +34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*